

**Մայրլ Է. Սթոուն** (Երուսաղեմ)  
*Իսրայելի գիտությունների ակադեմիայի անդամ*  
**Խաչիկ Ա. Հարությունյան**  
*Բանասիր. գիտ. թեկնածու*

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ  
ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մաս երկրորդ: Մուտքի սյուները և հարավային պատը\*

**Բանալի բառեր** – Երուսաղեմ, քրիստոնեություն, սրբատեղիներ, վանքեր, ուխտավորներ, ձեռագիր, գրիչ, վիմագիր, քերծագրեր, հիշատակարան:

**Մուտք**

Սուրբ Հարության տաճարի հարավային մուտքը զարդարում են բուսական գեղեցիկ զարդաքանդակներով պսակվող մարմարյա 11 սյուներ, որոնք կանգնեցվել են շուրջ ինը դար առաջ և այսօր էլ մեզ ներկայանում են գրեթե անխաթար տեսքով. այդ զարդանախշ սյուները արդարացիորեն համարվում են խաչակրաց շրջանի ճարտարապետական արվեստի սքանչելի նմուշներ (նկ. 1, 2)<sup>1</sup>:

Նույն ժամանակահատվածին է վերաբերում նաև տաճարի նշյալ մուտքի երբեմնի զույգ դռների բարավորների՝ բուսական և կենդանական տարատեսակ պատկերներով քանդակազարդ գոտին, որը, ցավոք, մեզ է հասել մասնակիորեն<sup>2</sup>: Վերջինիս փոխարեն ներկայում տեսանելի են սլաքաձև ու անհամաչափ նշանները միայն:

\* Ընդունվել է տպագրության 12.08.2020: Հոդվածի առաջին մասը տես «Վէմ», Եր., 2020, N 2, էջ 159-177:

1 Նյութի վերաբերյալ կա հարուստ գրականություն. տես, օրինակ, **Ousterhout R.**, Architecture as Relic and the Construction of Sanctity: The Stones of the Holy Sepulchre, “The Journal of the Society of Architectural Historians”, Mar. 2003, vol. 2, N 1, էջ 4-23, **Boas A. J.**, Jerusalem in the Time of the Crusades: Society, Landscape and art in the Holy City under Frankish rule, “Routledge”, London, 2001, էջ 191-194, **Rosen-Ayalon M.**, The Façade of the Holy Sepulchre, “Rivista degli Studi Orientali”, N 59 (1985), էջ 289-296 և այլն:

2 Նշյալ բարձրաքանդակի պահպանված մասը բարավորի վրայից հանվել է 1929 թ.: Ներկայում այն պահվում է Երուսաղեմի «Ողբֆելլեր» թանգարանում: Քանդակազարդ գոտու մասին տես **Heyman A.**, Fulcher’s Bestiary at the Door of the Holy Sepulchre, “Ad Limina”, 2015, vol. 6, էջ 106, ծնթ. 6, տես նաև նույն հոդվածում հիշատակվող գրականությունը:

Տաճարի ներկայիս մուտքը, որոշ փոփոխություններով, հիմնականում պահպանել է ժԲ դարավերջի և ժԳ դարասկզբի արտաքին տեսքը<sup>3</sup>: Զանց առնելով պատմական մանրամասները՝ նկատենք, որ 1099 թ. Երուսաղեմը գրավելուց հետո՝ ժԲ դարի առաջին կեսին (1130-ական թթ.), խաչակիրները ձեռնամուխ եղան տնօրինական սրբավայրերի նորոգմանը, վերակառուցմանը, նոր սրբատեղիների հիմնմանը: Սուրբ Հարության տաճարի հարավային մուտքն իր ներկայիս տեսքով գրեթե ամբողջությամբ հենց այդ շրջանի արդյունք է<sup>4</sup>: Ավելին՝ նույն՝ ժԲ դարում սրբավայրն ունեցել է արևմտյան և դեպի Գողգոթա բարձրացող ևս երկու առանձին մուտքեր, իսկ հարավային կողմում կառուցված ընդարձակ, քանդակազարդ ու երկթռիչ կամարներով մուտքն իր հերթին ունեցել է երկու մեծ դուռ: Ենթադրվում է, որ ժամանակին այդ դռներից մեկով մտել, մյուսով դուրս են եկել<sup>5</sup>, իսկ երկու դռների բարավորներին առկա քանդակազարդ գոտին, որի մասին հիշեցինք վերևում, ունեցել է նաև իր ուրույն խորհրդաբանությունը<sup>6</sup>:

Գարերի հովվությունում տաճարի հարավային մուտքի հիմնական և ամենից ակնառու փոփոխությունը այդ երբեմնի երկու դռներից մեկի փակումն է քարե շարվածքով, որը տեղի է ունեցել Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավումից (1187 թ.) հետո: Սուլթանի հրամանով փակվել են Սուրբ Հարության տաճարի արևմտյան և Գողգոթա բարձրացող մուտքերն ամբողջությամբ, ինչպես նաև հարավային մուտքի զույգ դռներից աջ կողմինը<sup>7</sup>: Թողնվել է միայն ձախակողմյան դուռը, որն այսօր էլ տաճար ելումուտ անելու հիմնական ճանապարհն է:

Քննվող 11 մարմարյա սյուներն ի սկզբանե զարդարել են տաճարի մուտքն ու ելքն ապահովող զույգ դռները հետևյալ բաշխմամբ. 1-3-րդ սյուներն ընկած են ներկայիս մուտքից ձախ (սյուների համարակալումը տե՛ս գրչանկարում, նկ. 1), 4-8-րդը՝ նույն մուտքից աջ, 8-րդ սյունից մոտ 2.5 մ աջ (փակված դռան հատվածը) 9-11-րդ սյուներն են: Եվս մեկ կիսասյուն կա դրսի կողմից Գողգոթա բարձրացող աստիճանների աջ մասում, որը հեշտ կողմնորոշվելու համար նշում ենք իբրև 12-րդ սյուն:


3 Այս մասին տե՛ս հոդվածի առաջին մասում՝ **Սթրուն Ս. Է., Հարությունյան Խ. Ա.**, Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարի հայերեն արձանագրությունները. մաս առաջին: Սուրբ Հովհաննես ավետարանիչ եկեղեցին և նրա արձանագրությունները, «ՎԷՄ», Եր., 2020, N 2 (70), էջ 163:

4 Տե՛ս **Folda J.**, The Crusader Church of the Holy Sepulchre: Design, Depiction and the Pilgrim Church of Compostela, “Tomb and Temple. Re-imagining the Sacred Buildings of Jerusalem”, ed. by Griffith-Jones R. and Fernie E., The Boydell press, Woodbridge, 2018, էջ 100-104:

5 Տե՛ս **Pataridze T., Tchekanovets Y.**, Revisiting the Georgian Inscriptions on the Portal of the Holy Sepulchre Church in Jerusalem, “Le Muséon”, 2016, N 129 (3-4), էջ 396-399:

6 Քանդակազարդ գոտու խորհրդաբանության, կենդանական և բուսական սիմվոլներին առնչվող կարծիքները մանրամասն տե՛ս **Heyman A.**, նշվ. աշխ., էջ 114-140:

7 Աստվածատուր եպս. Տեր-Հովհաննեսյանցը նշում է, որ Սալահեդդինը ցանկացել է առհասարակ փակել տաճարի բոլոր մուտքերը և քրիստոնյաներին այլևս չթողնել ներս մտնել, սակայն հետագայում մտափոխվել է (տե՛ս ժամանակագրական պատմություն Ս. Երուսաղեմի, բաժանեալ յերկուս հատորս, հատ. Ա., աշխատասիրութեամբ հաւաքեաց **Տէր Յովհաննէսեանց Ա. եպս.**, Երուսաղեմ, ի տպ. Սրբոց Յակոբեանց, 1890, էջ 157):



Նկ. 1: Տաճարի մուտքի սյուները՝ 1-12 համարակալվամբ

Նշյալ բոլոր սյուների վրա կան ուխտավորների և այցելուների թողած տարբեր լեզուներով (հայերեն, հունարեն, արաբերեն, ասորերեն, վրացերեն, լատիներեն և այլն) արձանագրություններ, որոնք հիմնականում անվարժ և անարհեստ գրեր են՝ առավելապես բաղկացած երկու-երեք բառից: Սյուներին դրոշմված օտարալեզու գրությունների մի մասը տարբեր եղանակներով ուսումնասիրվել է<sup>8</sup>, մինչդեռ հայերեն գրությունները, որոնք իրենց թվաքանակով ակնհայտորեն գերազանցում են մյուսներին, ցայժմ պատշաճ ուշադրության չեն արժանացել: Սույն հոդվածով ներկայացնում ենք այդ գրությունների մի փոքր մասը միայն՝ առաջիկայում դրանք ամբողջությամբ հրատարակելու ակնկալիքով:

Հայերեն արձանագրությունները գերազանցապես բովանդակում են հիշատակման բանաձևի բաղադրիչներ, ուխտավորների անուններ, որոնք երբեմն ուղեկցվում են տեղանվանացույց մականուններով: Որպես կանոն, դրանք սուր գործիքով արված փորագրություններ են, որոնք հաճախ չունեն անհրաժեշտ խորություն, ուստի ժամանակի ընթացքում մաշվել և դժվար-ընթեռնելի են դարձել: Այս տեսակ գրերը մասնագիտական գրականության մեջ տարբեր կերպ են բնորոշվում՝ **գրաֆիտի** («graffito» / «graffiti» եզրից), **անարհեստ** կամ **անվարժ գիր**, **քերձագիր**, **խազագիր**: Հոդվածում նպատակահարմար ենք գտել կիրառել **անարհեստ**, **անվարժ գիր** կամ պարզապես **քերձագիր** հասկացությունները: Առանձնանշելի են որոշ արձանագրություններ (Հ<sup>Ա</sup> 8, 10, 17, 21), որոնք աչքի են ընկնում իրենց գեղագրությամբ և արհեստավարժ փորագրությամբ: Ակնհայտ է, որ այդ դեպքերում գործ ունենք հմուտ փորագրողի հետ:

8 Վրացերեն գրությունների համար տես Pataridze T., Tchekanovets Y., նշվ. աշխ., ասորերենի համար՝ Brock S., Goldfus H., Kofsky A., The Syriac Inscriptions at the Entrance to the Holy Sepulchre, Jerusalem, "Aram", 2006-2007, N 18-19, էջ 415-438: Այս, ինչպես նաև այլ լեզուներով փորագրված արձանագրությունները կարելի է տեսնել նաև «The Rock Inscription Project»-ի շտեմարանում, որի մասին նշել ենք արդեն (տես Սթրոն Ա. Է., Հարությունյան Խ. Ա., նշվ. աշխ., էջ 162):

ՎԷՆ ՀԱՄԱՆԻՅԱԿԱՎԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ, ԺԲ (ԺԸ) ՎՐԱԿԻ, ԹԻՎ 3 (71), ԽՈՒԽ-ՆԵՎԿՄԻՆԻՔԻ, 2020

# 1. Հայերեն արձանագրությունների բաշխումը ըստ սյուների

12 սյուներից հայերեն արձանագրություններ ունեն 11-ը. սյուներից միակը, որի վրա հայերեն որևէ գրություն չենք արձանագրել, 6-րդն է: Այդ է պատճառը, որ համարակալված սյուների կարգով ներկայացվող արձանագրություններում նշյալ սյունը բաց ենք թողել: Այս ուշագրավ երևույթի պատճառը մեզ հայտնի չէ, քանի որ մյուս սյուներին կա առնվազն մեկ հայերեն գրություն: Այդպիսին են, օրինակ, 5-րդ և 7-րդ սյուները: Ամենից շատ հայերեն գրություններ կան 1-ին, 2-րդ, 3-րդ և 9-րդ սյուներին: Հայերեն արձանագրություններ կան նաև տաճարի հարավային պատին՝ դրսի կողմից Գողգոթա բարձրացող աստիճանների երկայնքով:

Նկատենք, որ սյուների վրա գրություններից ազատ մնացած հատվածներում ժամանակի ընթացքում զանազան նշաններ, տառեր, երբեմն նախադասություններ փորագրել-խցկելու, ուխտավորների անհամար հպումների (այսօր էլ կարելի է հանդիպել նույն երևույթին), ինչպես նաև բնակլիմայական պայմանների հետևանքով որոշ գրություններ խիստ վնասվել և դժվար ընթեռնելի են դարձել, իսկ մի քանիսն այն աստիճան են վնասված, որ հազիվ մեկ-երկու տառ է նշմարվում՝ այդպիսով հնարավորություն տալով առնվազն պարզելու գրության լեզուն: 1-5-րդ սյուներին հաճախադեպ են նաև մի քանի շերտ և տարբեր լեզուներով գրությունները, երբ նոր գիրը կամ նշանը հավելվել է պարզապես հնի վրա: Այս երևույթը նույնպես դժվարացնում է վերծանման աշխատանքը, երբեմն էլ՝ շփոթմունքի պատճառ դառնում: Հատկանշելի է, որ իրար վրա արված զանազան գծումներն առաջին հայացքից երբեմն կարելի է նմանեցնել նաև հայոց այբուբենի որևէ տառի, սակայն ուշադիր զննումով և համակարգչային մշակումով փորձել ենք հնարավորինս խուսափել այդ կարգի շփոթներից:

Ընդհանուր առմամբ սյուների և հարակից պատի վրայից գրառել ենք վեց տասնյակից ավելի արձանագրություն: Էջերի սահմանափակ քանակով պայմանավորված՝ հողվածում ներկայացնում ենք դրանցից միայն 22-ը, որոնք ներառում են բոլոր 12 սյուները: Առանձին դեպքերում հնագրական տվյալներով կամ հիշատակված անձանց նույնականացնելու միջոցով փորձել ենք նաև թվագրել անթվակիր արձանագրությունները:

Արձանագրություններն առավել հստակ տեղորոշելու նպատակով, բացի սյան թվահամարից, նշել ենք նաև դրանց **ուղղությունն ու բարձրությունը**: Գրությունները վերարտադրել ենք այնպես, ինչպես դրանք փորագրված են. կոր փակագծերում բացել ենք փորագրիչների համառոտագրությունները, բառերի կրճատումները, իսկ ուղիղ փակագծերում վերականգնել ենք արձանագրությունների վնասված հատվածները: Վնասված և անընթեռնելի հատվածներում դրել ենք երեք թեք գծիկ: Անձնանունները,


տեղանվանացույց մականունները և թվականները գրել ենք մեծատառերով, համեմատաբար ընդարձակ արձանագրությունները կետադրել ենք: Արձանագրություններին կցել ենք նաև համապատասխան գրչանկարները, հողվածի վերջում էլ տրվում են արձանագրությունների լուսանկարները:

## 2. Սյուների հայերեն արձանագրությունները

**ՍՅՈՒՆ 1-ին.** սյան վրա հաշվել ենք 13 հայերեն արձանագրություն, որոնցից հնագույնը փորագրվել է հայոց ՋԼԸ (1489) թվին: Հնագրական տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև Հ<sup>մ</sup> 2 արձանագրությունը, որի գրչությունը թվագրում ենք ամենաուշը ԺԴ դարով: Սյան վրա մեծ թիվ են կազմում ուշ միջնադարում, հատկապես ԺԷ-ԺԸ դդ. թողնված անթվակիր գրությունները:

1. Անվարժ գրություն՝ գետնից 140 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ, 1489 թ. (նկ. 3):


ԱՌ Վ.  
 [թ]ին //ն ՋԼԸ (1489)  
 Մաթէ[ո]ս առ  
 այ Ս(ուր)բ Յարութե(ան)ն  
 ուխտս, ահ  
 ա նայ.  
 ՋԼԸ (1489)



**Ծնթ.:** Արձանագրությունը փորագրված է ոչ շատ խորը, ուստի քարի վրա առկա զանազան քերծվածքների և քարի մաշվածության պատճառով գիրը փոքր-ինչ դժվարընթեռնելի է: Անհասկանալի է մնում առաջին տողի **ԱՌ Վ.** տառախումբը. արդյոք հնարավո՞ր է ընթերցել «Առ(աթել) վ(արդապետ)»: Թվում է՝ այն կարող է դիտվել նաև բուն արձանագրությունից անջատ՝ որպես առանձին գիր:

2. Գեղեցիկ երկաթագրով փորագրություն՝ գետնից 165 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 4):

ՍԱՀԱԿ



**Ծայր.** Հնագրական տեսանկյունից ուշադրություն է գրավում **Սահակ** անվան մեջ երկու **Ա** տառերի փորագրման եղանակը. երկու դեպքում էլ տառի ստորին աջ անկյունից դուրս եկող ստեղծյալ սկիզբ է առնում տառը ձևավորող ուղղահայաց երկրորդ գծիկի գրեթե մեջտեղից՝ տառի ներսում ձևավորելով փոքրիկ բոլորակ: **Ա**-երի, ինչպես նաև **Հ**-ի գրության այս եղանակը հնարավոր է դարձնում արձանագրության թվագրումը ԺԳ-ԺԴ դարերով<sup>9</sup>:

Նկատենք, որ այս տեսանկյունից **Ա**-ի գրության եղանակը շատ մոտ է 4-րդ սյան ստորին հատվածում փորագրված Հ<sup>մ</sup> 12 արձանագրության **Ա**-երի փորագրման եղանակին: Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ Հ<sup>մ</sup> 12 արձանագրության մեջ դարձյալ հիշատակված է **Սահակ** անունը, չենք բացառում, որ երկու դեպքում էլ հիշատակված է միևնույն անձը:

Քննվող գրության մեջ՝ **Սահակ** անվան անմիջապես կողքին և ներքևում, դժվարությամբ նշմարվում են ավելի ուշ շրջանում քերծված հայերեն մի քանի տառեր: **Սահակ**-ի կողքին հնարավոր եղավ ընթերցել նաև **Ծատուր** անունը, որը **Աստվածատուր** անվան կրճատ ձևերից է՝ վկայված նաև ինքնուրույն կիրառությամբ<sup>10</sup>: **Սահակ** անվան ներքևում երևացող հայերեն մի քանի այլ տառերից (ես, գ, ց, ը, խ) իմաստակիր բառի ընթերցում հնարավոր չեղավ:

2. Անվարժ գրություն՝ գետնից 185 սմ բարձրության վրա, փորագրված խաչի տակ, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 5):

ՌՎԱՆԵԼՍԻ



9 Հմնտ. Stone M. E., Kouymjian D., Lehmann H., Album of Armenian Paleography, Denmark, Aarhus University Press, 2002, էջ 520 (Հմր 86, 1280 թ.), 522 (Հմր 104, 1300 թ.):  
10 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 1942, էջ 233-234:

**Ծնթ.:** Փորագրված է երկաթագրով: Անվան սկզբնամասում՝ **Ո** և **Վ** տառերի անմիջապես վերևում, նշմարվում է մեկ կամ երկու տառաձև, որոնք ոճով և փորագրության խորությամբ կարծես թե համահունչ չեն երկաթագիր արձանագրության ժամանակին: Չենք բացառում այդտեղ կցագիր **ՏԲ** գրությունը, որը վերծանելի է «ՏԷԻ» ձևով:

4. Փակագիր՝ գետնից 177 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 6):

ՎԱՐԴԱՆ

Բարսեղ




**Ծնթ.:** Ուշադրություն է գրավում անվան փորագրման եղանակը: Այն ներկայանում է երկնաս փակագրությամբ. առաջին տառախումբը վերծանվում է **ՎԱՐ**, իսկ երկրորդը՝ **ԴԱՆ** ձևով:

**Վարդան** անվան անմիջապես ներքևում ամբողջությամբ փոքրատառ և այլ ձեռքով, անարհեստ գրով փորագրված է **Բարսեղ** անունը:

5. Անարհեստ գիր՝ գետնից 170 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 7):

ՍԱճՈՒ  
ԷՂ ԱԲԵՂ  
Այ



**Ծնթ.:** Արձանագրությունը թեև բազմաթիվ քերծումների պատճառով վնասված է, սակայն հստակ ընթերցվում է: Գրությունը խառն է. փորագրված է մեծատառերով և փոքրատառերով:

**Սաճուել** արեղայի վերաբերյալ մեր որոնումները Մկրտիչ Եպս. Աղավնունու ցանկում էական արդյունք չտվեցին. այս անվամբ նշյալ ցանկում հիշատակված են մի շարք անձինք, որոնք այցելել են Սուրբ երկիր կամ սպասավորել Սրբոց Հակոբյանց միաբանությունում<sup>11</sup>: Լրացուցիչ տեղե-

11 Տե՛ս Աղավնունի Մ. Եպս., Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1929, էջ 446-448:

կությունների բացակայության պատճառով, սակայն, որևէ մեկի հետ հնարավոր չէ նույնացնել արձանագրության մեջ նշված **Սամուել** արեղային:

6. Քերծագիր՝ գետնից 125 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 8):

Խ(ա)չ(ա)տ(ու)ր արեղայս  
Մուշեցի

**Ծայր.** Արձանագրությունն ամբողջությամբ փորագրված է փոքրատառերով և ոչ այնքան խորը: Շուրջըլորն առկա տարատեսակ քերծվածքների պատճառով առանձին տառեր վնասված և աղավաղված են: Մասնավորապես դժվարընթեռնելի են **Մուշեցի** տեղանվանացույց մականվան առաջին **Մ** և վերջին երկու տառերը: Գրչանկարում դրանք առավել հստակ են երևում:

Հիշատակված Խաչատուր արեղա Մշեցին, ամենայն հավանականությամբ, Մ. եպս. Աղավնունու հիշատակած Խաչատուր վարդապետն է՝ հայոց Սուրբ Փրկիչ վանքի տեսուչը<sup>12</sup>: 1724 թ. վերջինս ԺԴ դարի մի Սաղմոսարան է նվիրել նշյալ վանքին<sup>13</sup>: Խաչատուր վարդապետի տապանաքարը գտնվում է Սուրբ Փրկչի գավթում<sup>14</sup>:

7. Քերծագիր՝ գետնից 120 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 9):

Կ(ի)րակ(ո)ս  
ար(ե)ղ(ա)յ մու///

**Ծայր.** Արձանագրությունն ամբողջությամբ փոքրատառերով է: Առաջին երկու տառերի վրա նկատելի է նաև պատվի նշանը, որը կրկնված է երկրորդ տողում՝ **արղ** տառախմբի վրա:

«Արեղայ» բառից հետո ընթերցվում են **մ** և **ու** տառերը, սակայն հաջորդիվ այլ տառեր չեն նշմարվում: Հավանաբար դրանք տեղանվանացույց

12 Տես նույն տեղում, էջ 176:

13 Տես Մայր ցուցակ ծեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. 2, կազմեց **Պողարեան Ն. եպս.**, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1972, էջ 23:

14 Տես **Սաւալանեանց Տ. Հ. Թ.**, Պատմութիւն Երուսաղեմի, զրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց **Նշանեան Ս. եպս.**, հատ. Բ., Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1931, էջ 1268:




մականվան առաջին երկու տառերն են, և գուցե կարելի է ընթերցել «Մուլշե-ցի» ձևով, ինչպես նախորդ արձանագրության մեջ:

**ՍՅՈՒՆ 2-րդ.** ընդհանուր սյունաշարից այս սյունն առանձնանում է ստորին հատվածում մոտ 1.5 մ բարձրությամբ ձաք-բացվածքով: Դրա առաջացման շուրջ հյուսվել են տարբեր պատմություններ, որոնց անդրադառնալը դուրս է մեր նպատակից<sup>15</sup>: Ակներն է, որ ինչպես անցյալում, այսօր էլ ուխտավորները շարունակում են մոտենալ, համբուրել այս սյունը, աղոթել դրա մոտ, գրություններով փոքրիկ թերթիկներ տեղադրել այան նշյալ ձեղքվածքում:

Հայերեն հնագույն թվակիր արձանագրությունն այս սյան վրա թողնվել է հայոց ՊԿԶ (1417) թվականին. առավել շատ են ժԷ-ժԹ դդ. թողնված անթվակիր գրությունները:

8. Փորագրված է գետնից 200 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 10):



Ա(ՍՏՈՒԾՈ)Ց ԾԱՌԱ ԹԱԹՈՒԼ, ՈՐ ԱԶԱՏԵ(Ա)Ց ՈՐԴԻ ԱՍԼՊԷԿԻՆ ՍՍՈ. ԹՎ(ԻՆ) ՊԿԶ. (1417)

**Ծնթ.:** Արձանագրությունն աչքի է ընկնում իր խոշոր և վայելուչ երկաթագրով: Ի տարբերություն այս և մյուս սյուներին ամկա գրությունների՝ սույն արձանագրությունն արված է բավական վարպետորեն: Բառանջատումների համար առաջին տողում երկիցս կիրառված է երեք կետ: Դատելով արձանագրության ոճից և փորագրման դիրքից՝ թերևս կարելի է ենթադրել, որ գործ ունենք ազդեցիկ մի անձի կամ ազնվական մեկի պատվերով արված գրության հետ:

Նկատենք, որ առաջին տողի վերջում փորագրված «որ ազատե(ա)ց» գրությունը նույն ձեռքով, բայց բուն արձանագրությունը փորագրելուց հետո հավելված գրության տպավորություն է թողնում: Կարծես փորագրման ժամանակ այն զետեղվել է ազատ մնացած մասում, ուստի դժվարանում

15 Այդ պատմություններին ծանոթանալու համար տես Աղաճունի Մ. Եսյս., Սուրբ երկրին սրբավայրերու ականդորինները, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1936, էջ 75-77:


ենք հստակ նշել, թե այս հավելումը ում է վերաբերում՝ **Թաթուլի՞ն**, թե՞ **Ասլպեկին**:

Հիշատակված **Թաթուլ** և **Ասլպեկ** անձնանունների փնտրտուքը սկզբնաղբյուրներում էական արդյունքի չհանգեցրեց: Ուշագրավ է մի փաստ միայն, որի մասին հիշատակել է հայր Ղևոնդ Ալիշանը: Ըստ մխիթարյան անխոնջ մշակի՝ ուն պարոն Ասլպեկ 1404 թ. առաջնորդել է Սսի գաղթականությանը դեպի Կիպրոս կամ Իտալիա<sup>16</sup>: Մեր քննած կիլիկյան աղբյուրներն այս անվամբ և այս շրջանից ուրիշ որևէ ստեցու մասին չեն հայտնում, ուստի բացառված չէ, որ Սուրբ Հարության տաճարի նշյալ արձանագրության մեջ հիշատակված ստեցի Ասլպեկը և Ալիշանի վկայակոչած Սսի պարոն Ասլպեկը միևնույն անձն են: Թերևս առաջիկա ուսումնասիրությունները կարող են լույս սփռել այս հարցի վրա<sup>17</sup>:

Արձանագրության երկրորդ տողի վերջում նկատվում են ուշ շրջանում հավելված հայերեն այլ գրություններ, որոնք բազմաթիվ քերծումների պատճառով հստակ չեն ընթերցվում: Մասնավորապես ՊԿԶ թվականից անմիջապես հետո փոքրատառերով փորագրված է «ղևնդ ծա», որը կարելի է թերևս վերծանել «Ղևոնդ ծա[ռայ Աստուծո՞յ]» ձևով:

9. Քերծագիր գրություն՝ գետնից 145 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի 1-ին սյունը (նկ. 11):

Ակոբ  
Քօն  
եա  
լի



**Ծնթ.**: Վերջին տողում փորագրված **լի**-ն թուրքերեն վերջածանց է, որը համարժեք է հայերենի **-ցի** վերջածանցին, այսինքն՝ բառը պետք է հասկանալ «Քօնեացի» ձևով: Ըստ ամենայնի՝ հիշատակված Ակոբը ծնունդով եղել է Կոնիա քաղաքից<sup>18</sup>:

16 Տես Ալիշան Հ. Վ. Մ., Սիսուան. համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 542: Տես նաև Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ, գրեց Օրմանեան Մ. արք., հատ. Բ., մասն Ա., Պէրոյթ, տպ. «Սեւան», 1960, էջ 2007 (§ 138): Տես նաև Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 226:

17 Չգուշավորութեամբ ենթադրում ենք, որ արձանագրության մեջ հիշատակված այս Ասլպեկը կարող է լինել նաև 1413 թ. մի հիշատակարանում նշված Ասիլպակը, քանի որ թե՛ անվան եզակիությունը և թե՛ ժամանակաշրջանը համընկնում են (տես ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Խաչիկյան Լ. Ս., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 330):


18 Տես Հակոբյան Թ. Խ., Սելիք-Քալսշան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 3, 4-2, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 207:

Արձանագրության 2-րդ և 3-րդ տողերի դիմաց այլ ձեռքով փորագրված է **Խ** տառը:

**ՍՅՈՒՆ 3-ՐԳ**

10. Փորագիր արձանագրություն՝ գետնից 185 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի տաճարի մուտքը (նկ. 12):

ԹՈՐՈՍ ԵՊ(ԻՍԿՈՊՈՍ) ՅԵՒԿԱՌՈՒ  
ԵՒ ԿԵՍԱՐԻՈՅ. ՅԱՐ(Ո)Ի(Թ)Ի(ԻՆ)  
Ի ՔԵԶ ՅԱՆՁԻՆ. ԹՎԻ(Ն) ՊԿԶ. (1417)



**Ծանոթ.:** Արձանագրությունը փորագրված է խոշոր և վայելուչ երկաթագրով, լավ պահպանված է և դյուրընթեռնելի:

Իր բովանդակությամբ և ակնառու վայրում փորագրված լինելու շնորհիվ այն աննկատ չի մնացել ուսումնասիրողների կողմից: Արձանագրությունն առաջինը հրատարակել է Տրդատ Եպս. Պայանը Կ. Պոլսի նշանավոր «Բիւզանդիոն» օրաթերթում<sup>19</sup>: Հաջորդիվ նույն արձանագրությունը հրատարակել է նաև Մկրտիչ Եպս. Աղավնունին<sup>20</sup>: Նկատենք, որ երկու հրատարակություններն աննշան տարբերություններ ունեն, որոնք վերաբերում են առանձին տառերի ընթերցումներին: Դրանցից նշելի է մասնավորապես այն, որ Աղավնունին «Յեկառու»-ն ընթերցել է «Յեկասու» ձևով, մինչդեռ մեծատառ **Ռ** գիրը բավական հստակ է: Խոսքն այստեղ Կապադովկիայի Եվքառա կամ Եվքարա գյուղի մասին է, որը հնուց ի վեր բնակեցված էր հայերով, եղել է նաև հայ գրչության օջախներից<sup>21</sup>:

Տ. Եպս. Պայանի ընթերցումը տեղ է գտել նաև Կեսարիայի պատմությանը նվիրված Արշակ Ալպոյաճյանի արժեքավոր ուսումնասիրության մեջ, թեև, ինչպես երևում է, Ալպոյաճյանը ծանոթ է եղել նաև Աղավնունու տարբերակին<sup>22</sup>:


Ցավոք, արձանագրության մեջ հիշատակված Թորոս Եպիսկոպոսի մասին լրացուցիչ տեղեկություններ հայտնի չեն: Նույնիսկ հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք այս պարագայում կարող էին օգտակար լինել իրենց հաղորդած տեղեկություններով, որևէ հիշատակում չունեն Թորոս Եպիսկոպոսի մասին: Նկատենք, որ վերջինս գրանցված է նաև

19 Տե՛ս **Պայան Տ. Եպս.**, Առաջնորդական յաջորդութիւնք Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1906, N 3073:  
20 Տե՛ս **Աղանունի Մ. Եպս.**, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, էջ 162:  
21 Տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 2, Դ-Կ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1988, էջ 209:  
22 Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հատ. Ա., Գահիրէ, 1937, էջ 915:

«Հայոց անձնանունների բառարան»-ում, որում իբրև աղբյուր վերցված է Ա. Ալպոյաձյանի վերոնշյալ ուսումնասիրությունը<sup>23</sup>:

11. Քերծագիր արձանագրություն՝ գետնից 125 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի տաճարի մուտքը (նկ. 13):

Կարապետ  
Կողեցի յիշեց[էք]




**Ծնթ.:** Արձանագրությունն ամբողջությամբ փոքրատառերով է: Ոչ շատ խորը փորված լինելու, ինչպես նաև շուրջբոլորն առկա բազմաթիվ քերծումների պատճառով փոքր-ինչ վնասվել են անվան **կ, ր, պ** տառերը:

**Կողեցի** տեղանվանացույց մականունը հուշում է Կարապետի՝ Կող անունով բնակավայրից լինելը, սակայն նկատելի է, որ այդ անունով «Տեղանունների բառարան»-ում միաժամանակ մի քանի բնակավայր է արձանագրված<sup>24</sup>, և լրացուցիչ տեղեկությունների բացակայության պայմաններում հնարավոր չէ նշել, թե այս դեպքում որ բնակավայրի մասին է խոսքը:

**ՍՅՈՒՆ 4-ԲԳ**

12. Գեղեցիկ փորագրություն՝ գետնից 45 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի տաճարի մուտքը (նկ. 14):

ՍԱՎԱԿ ԱԲԵՂԱ(Յ) Կ(ա)Ֆացի՞ Յ(ի)շ(եցէք)



**Ծնթ.:** Արձանագրության մեջ միանգամից ուշադրություն է գրավում **Ա** տառի փորագրման եղանակը **Սահակ** անվան մեջ: Տառի ստորին ստեղծը սկիզբ է առնում ուղղահայաց երկրորդ գծի մեջտեղից և ներսում ձևավորում գեղեցիկ բոլորակ: Այս տեսքով այն խիստ նման է 1-ին սյան Հ<sup>մ</sup> 2 արձանագրու-

23 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Եր., ԵՊՀ հրատ., 1944, էջ 362:  
24 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քալաշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 3, էջ 195:

թյան գրին (Հ տառի գծումները ևս նման են իրար): Ըստ այսմ՝ ենթադրում ենք, որ այս երկու գրություններում միևնույն մարդն է հիշատակված: «Աբեղա» բառում ուշադրություն են գրավում կցագիր **Բ** և **Ե** տառերը: Հնագրական տեսանկյունից «Սահակ աբեղա» գրությունը կարելի է թերևս թվագրել ոչ ուշ, քան ԺԴ դարով:


Հետաքրքիր են «աբեղա»-ից անմիջապես հետո ենթադրաբար այլ ձեռքով փորագրված տառերը: Համենայնդեպս, այդ են հուշում ինչպես տառաձևերը, այնպես էլ դրանց չափսերը: Այդ հավելումը մենք ընթերցում ենք «Կ(ա)ֆացի յ(ի)շ(եցեք)» ձևով, որն ինքնին կարծես թե անավարտ է, մինչդեռ նախորդ անվան հետ ընթերցելու դեպքում ստացվում է «Սահակ աբեղա Կաֆացի յիշեցեք» նախադասությունը: Հավանաբար այս փոքրիկ հավելումն արվել է հենց այս նպատակով, սակայն դժվարանում ենք վստահորեն ասել՝ արդյոք ամբողջ տողը միաժամանակ է փորագրվել, թե՞ հավելումն արված է ավելի ուշ:

Քննվող տողից 5-6 սմ ներքև նկատելի են այլ ձեռքով փորագրված **Ղ** և **Ա** տառերը, որոնք հավանաբար անավարտ թողնված գրության մաս են:

**ՍՅՈՒՆ 5-ԲԳ**

13. Քերծագիր գրություն՝ գետնից 121 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի 6-րդ սյունը (նկ. 15):

Թոմաս




**Ծնթ.:** Արձանագրությունն ամբողջությամբ փոքրատառերով է և, ըստ ամենայնի, ոչ շատ վաղ շրջանի:

**ՍՅՈՒՆ 7-ԲԳ**

14. Անարհեստ գրություն՝ գետնից 140 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ, 1495 թ. (նկ. 16):

Դասապետ [եր]  
եցս անարժանս  
յիշեցեք] ի Տ(է)ր.  
[թուին Ջ՞]ԽԳ



**Ծնթ.**: Մարմարյա սյան կենտրոնական հատվածը խիստ վնասված է և շերտագատված, ինչի հետևանքով ներկայացվող քերծագիր և ամբողջությամբ փոքրատառ գրությունը դժվարընթեռնելի է, իսկ որոշ տառեր եղծված են: Ցավոք, քայքայումը կարծես թե շարունակվում է, ուստի սույն արձանագրության հետագա գոյությունը վտանգված է:


Դժբախտաբար, վնասված է նաև արձանագրության ստորին տողը, որտեղ ենթադրաբար եղել է թվականը: Այդ են հուշում պահպանված թվականանիշ վերջին երկու տառերը՝ **խդ**: Դրանցից առաջ նշմարվում է առնվազն մեկ տառի ուրվագիծ ևս, որը նմանեցնում ենք **ջ**-ի՝ ստորին մասում զիգզագաձև գծիկի հիման վրա: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա թվականը պետք է ընթերցել **ՋԽԴ** (1495): Հնագրական տեսանկյունից այս թվականը միանգամայն հավանական է: Մյուս կողմից՝ նկատենք, որ արձանագրության մեջ հիշատակված **Դասապետ** անձնանունը, ըստ Հ. Աճառյանի, հայոց մեջ կիրառվել է ԺԳ-ԺԴ դդ.<sup>25</sup>, սակայն մեր որոնումները հաստատում են, որ քննվող անձնանունը առնվազն ԺԵ դարում ևս գործածվել է<sup>26</sup>:

Արձանագրության շուրջ կամ միջտողային տարածություններում նշմարվում են հետագայում թողնված հայատառ այլ գրություններ ևս, որոնք, սակայն, խիստ եղծված են և որևէ իմաստակիր բառ չեն հողում:

### ՍՅՈՒՆ 8-ՐԴ

14. Քերծագիր գրություն՝ գետնից 158 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 17):

Ա(ստուծոյ) ծառայ Թաթուլն



**Ծնթ.**: Արձանագրությունը խոշոր բոլորգրով է և բավական խոր փորված, ինչի շնորհիվ գիրը լավ պահպանված և դյուրընթեռնելի է:

25 Տես Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 17:


26 Տես ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, էջ 512: Նկատելի է, որ անունը հիշված է 1320 թ. ստեղծված ձեռագրի հետագայում հավելված հիշատակարանում, որը Լ. Խաչիկյանը թվագրել է ԺԵ դարով:

**ՍՅՈՒՆ 9-ԲԴ**

16. Քերծագիր գրություններ՝ գետնից 158-160 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի տաճարի մուտքը (նկ. 18):

Ստեփա  
նոս  
յիշ(եցեք)

ԶՍտեփա[նոս]  
Յերկայն  
Յիշեցեք ի Տէր,  
եւ Աստուած զձեզ յիշէ



**Ծնթ.**: Արձանագրության երկրորդ հատվածում նշված «Յերկայն» մականվան շնորհիվ հնարավոր եղավ ձշտել հիշատակված Ստեփանոսի ինքնությունը: Քերծագիր այս արձանագրությունը թողել է ԺԳ դարավերջի և ԺԴ դարասկզբի արդյունաշատ գրիչ Ստեփանոս Երկայնը, որը հայտնի է մի շարք ձեռագրերի ընդօրինակություններով<sup>27</sup>: Նա ձեռագրեր է գրչագրել Դարանաղյաց գավառի Մեպոսի լեռան Սուրբ Լուսավորիչ վանքում, Դրագարկում և Երուսաղեմում: Ըստ որում՝ Երուսաղեմում Ստեփանոս Երկայնի ընդօրինակած ձեռագրերից հայտնի են երեքը՝

1. Մանրուսմունք, 1314 թ. - ընդօրինակել է «ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ի վանս, որ կոչի Սուրբ Հրեշտակապետաց»: Ձեռագիրն այսօր պահվում է ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքի Ազատ գրադարանում<sup>28</sup>:

2. Ծաշոց, 1316 թ. - ընդօրինակել է դարձյալ Սուրբ Հրեշտակապետաց վանքում: Ձեռագիրը պահվում է Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրատանը (Հ<sup>ն</sup>ր 271)<sup>29</sup>:

3. Ավետարան, 1321 թ. - ընդօրինակել է Սրբոց Հակոբյանց մայրավանքում: Ձեռագրի գտնվելու ներկա վայրն անհայտ է: Հիշատակարանը գրանել է Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը<sup>30</sup>:

27 Տես **Ծովական (Պողարեան) Ն. արք.**, Ստեփանոս Երկայն (1295-1327), «Սին», 1967, N 5-6, էջ 247-249, **Ծովական (Պողարեան) Ն. արք.**, Հայ գրիչներ (Թ-ժ դար), Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1992, էջ 115-124, **Աղանունի Մ. եպս.**, Սիաքանք եւ այցելութիւնս հայ Երուսաղէմի, էջ 479-480:  
28 Տես A catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, by **Sanjian A. K.**, University of California Press, Berkeley-Los Angeles-London, 1976, էջ 670-673:  
29 Տես Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Բ, կազմեց **Պողարեան Ն. եպս.**, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 75-80:  
30 Տես **Սրուանձտեանց Գ. վ.**, Թորոս աղբար, մասն Բ., Կ. Պոլիս, տպ. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1885, էջ 344-347, տես նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա (1301-1325 թթ.), կազմողներ՝ **Խաչիկյան Լ., Մաթևոսյան Ա., Ղազարոսյան Ա.**, Եր., «Նաիրի» հրատ., 2018, էջ 431:

Ստեփանոս Երկայնից մեզ հայտնի հաջորդ և վերջին ձեռագիրն ընդօրինակված է 1327 թ. Դրագարկում<sup>31</sup>:

Հաշվի առնելով Երուսաղեմում գրչի ընդօրինակած մատյանների նշյալ ժամանակագրությունը՝ կարծում ենք, որ Ստեփանոս Երկայնը վերոնշյալ արձանագրությունը փորագրել է 1314-1321 թթ. ժամանակամիջոցում:

17. Փորագիր արձանագրություն՝ գետնից 150 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 19):

Ի ՔՐ(Ի)Ս(ՏՈՍ)Ի Ս(ՈՒՐ)Բ ՏՆԱԻՐԻՆԱԿԱ  
ՆՔՍ ՅԻՇԵՑԷՔ  
ԶՎԱՐՀԱՄ ԷՐԷ  
Ց ՍՍՑԻ



**Ծանոթ.** Արձանագրությունը փորագրված է խոշոր և գեղեցիկ երկաթագրով, լավ պահպանված և դյուրընթեռնելի է: Ուշադրություն է գրավում հատկապես **Զ** տառը, որի ստորին ձախ մասն աչքի է ընկնում իր հետաքրքիր ձևավորմամբ: Դատելով գրության ոճից և դիրքից՝ սույն արձանագրությունը ժամանակով մոտ ենք համարում 1417 թ. 2-րդ սյան վրա փորագրված Հ<sup>մ</sup> 8 արձանագրությանը, այսինքն՝ թվագրելի է ԺԵ դարի սկզբով:

Հիշատակված **Վարհամ** անունը ակնհայտորեն **Վահրամ** անվան հնչյունական տարբերակներից է՝ **ր** և **հ** տառերի դրափոխությամբ առաջացած: Սույն արձանագրության փորագրման եղանակից կարելի է ենթադրել, որ հիշատակված **Վարհամը** ոչ թե հասարակ ուխտավոր, այլ ազդեցիկ մեկն է եղել, որի համար խոշորատառ և վայելուչ գրով այսպիսի փորագրություն է արվել: Ըստ էության, այս, ինչպես նաև Հ<sup>մ</sup> 8 և Հ<sup>մ</sup> 10 գրություններն ամենաընդարձակն ու գեղեցիկն են Սուրբ Հարության տաճարի սյուների փորագրվածների մեջ, և երեքն էլ, փաստորեն, ԺԵ դարից են, իսկ դրանցում հիշատակվածները, թվում է, ամենևին էլ պատահական անձինք չեն: Դեռ ավելին՝ արձանագրության ոճը թույլ է տալիս ենթադրել, որ հավանաբար փորագրիչն էլ միևնույն անձն է եղել:

Մեր որոնումները նշված ժամանակամիջոցում **Վարհամ** կամ **Վահրամ** անունով ստեցի երեց գտնելու հույսով էական արդյունք չտվեցին: Առանձնանշե-

31 Տես **Զուգազյան Բ. Լ.**, Հայերեն ձեռագրեր Ամերիկայի Միացյալ Նահանգներում, «Քանթեր Մատենադարանի», Եր., 1977, N 12, էջ 230-232:




լի է միայն Հակոբ Գ Սսեցի Ամենայն հայոց կաթողիկոսի (1401-1411) այրոնակալ տեր Վահրամը, որը հիշվում է ժամանակի ձեռագիր հիշատակարաններում<sup>32</sup>: Այս երկու Վահրամների միջև ակնհայտ որևէ կապ չկա, և դժվար է վստահորեն նրանց նույնացնել, ուստի մենք գերծ կմնանք դրանից՝ գործը թողնելով հարցի պատմությամբ զբաղվողներին:

**ՍՅՈՒՆ 10-ԲԴ**

18. Անարիեստ գրություն՝ սյան նիստին, ուղղությունը՝ դեպի 9-րդ սյունը (նկ. 20):

ԶԴ(ա)ն(իէլ) յիշել աղաչեմ

Պ(ո)ղոս




**Ծնթ.**: Առաջին գրության մեջ՝ պատվի նշանի ներքո, փոքրատառերով համառոտված է **զղն** տառախումբը, որը, մեր կարծիքով, պետք է ընթերցել որպես անձնանուն: **Զ** տառը դիտարկելով իբրև անվան նախդիր՝ **ղն**-ի վերծանման համար առաջարկում ենք «Դանիէլ» անունը:

Այս գրությունից փոքր-ինչ ներքև՝ փորագրված խաչի ձախակողմյան մասում՝ դարձյալ պատվի նշանի ներքո, փոքրատառերով և այլ ձեռքով քերծագրված է **պղոս** տառախումբը, որում **պ** և **ղ** տառերը կցագիր են: Այս դեպքում տառախումբը վերծանելի է «Պ(ո)ղոս» ձևով: Երկու գրություններն էլ թվագրելի են ժԶ-ԺԷ դարերով:

**ՍՅՈՒՆ 11-ԲԴ**

19. Քերծագիր գրություն՝ դրսի կողմից դեպի Գողգոթա բարձրացող երկրորդ աստիճանից 25 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի տաճարի մուտքը (նկ. 21):

ՄԻԽԹԱՐ  
ԵՐԵՑ ԼՈՒ  
ԵՑԻ ՅԻՇ  
[ԵՍ]Զ[ԻԲ]



Բարս յիշեցեք

ՎԷՆ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 3 (71), հունիս-սեպտեմբեր, 2020

32 Տես ժԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, էջ 330, հմմտ. նաև Օրմանեան Մ. արք., նշվ. աշխ., էջ 2007:


**Ծնթ.**: Առաջին գրությունը երկաթագիր է՝ բացառությամբ երկու **ց**-երի, որոնք փոքրատառ են: Կցագիր են **Մխիթար** անվան **Ա** և **Բ** տառերը: **Լոռեցի** տեղանվանացույց մականունը հուշում է, որ Մխիթար երեցը սերել է Հայաստանի հյուսիսից՝ Լոռուց:

Երկաթագիր արձանագրության կողքին այլ ձեռքով փորագրված է բոլորգիր մեկ այլ գրություն, որում ընթերցում ենք **Բաբ** անձնանունը: Այն արձանագրված է «Հայոց անձնանունների բառարան»-ում, համաձայն որի՝ անունը հայոց մեջ գործածվել է հնագույն ժամանակներից առնվազն մինչև ժԶ դար<sup>33</sup>:

**ՍՅՈՒՆ 12-ԲԳ**

20. Քերծագիր գրություն՝ գետնից մոտ 200 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի տաճարի մուտքը (նկ. 22):

Մարկոս երեց  
սուտանուն  
|ծ|առայ սուրբ գոր///ա///այ



**Ծնթ.**: Տառերի մի մասը խորության շնորհիվ անվնաս է մնացել և հեշտությամբ ընթերցվում է, որոշ տառեր էլ դժվարընթեռնելի են շուրջբոլորն առկա քերծումների պատճառով: Մասամբ վնասված է երրորդ տողի վերջին բառը, որից միայն մի քանի տառ է նշմարվում: Գո՞ւցե փորագրված է եղել «Գողգոթայ» բառը՝ հաշվի առնելով այն, որ այս սյունը կպած է դեպի Գողգոթա բարձրացող դրսի աստիճաններին:

Գրության տակ ՔՍ տառերով փորագրված է խաչաձև փակագրություն, որը վերծանելի է որպես «Քրիստոս»: Փոքր-ինչ ներքև՝ փորագրված խաչերի տակ, հազիվ նշմարվում է այլ ձեռքով գրված **Սարգիս** անձնանունը:

21. Փորագիր արձանագրություն՝ տաճարի հարավային պատին՝ դրսի կողմից, ուղղությունը՝ դեպի բակ (նկ. 23):

Վ(ԱՐ)ԴԱՆ ԷՐԷՑ ԾԱՐԵՑԻ  
ՅԻՇԵՑԷՔԻ Ի Ք(ՐԻՍՏՈՍ). ՊԲ. (1353)



0

33 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 348:

**Ծնթ.**: Գրությունն ամբողջությամբ երկաթագիր է և աչքի է ընկնում տառերի խոշորությամբ ու գեղեցկությամբ: Հատուկ ուշադրության են արժանի Շ տառը և արձանագրության մեջ գործածված պատվի նշանները, որոնք նման են բուսական զարդանախշի: Գրությունն ավարտվում է գեղեցիկ վերջնազարդով:

**Ծարեցի** տեղանվանացույց մականունը հուշում է, որ հիշատակված Վարդան երեցը սերում է Արցախի նշանավոր Ծար գյուղաքաղաքից<sup>34</sup>, որը միջնադարում եղել է նաև գրչության հայտնի կենտրոն<sup>35</sup>: Ցավոք, անհայտ է մնում հիշատակված Վարդան երեցի ինքնությունը:

Արձանագրությունից 2-3 սմ ներքև նշմարվում է Յ տառի նմանվող մի նշան, որը հավանաբար փորագրիչի ստորագրությունն է՝ վարպետանշանը:

22. Փորագիր արձանագրություն՝ աստիճանների ավարտին՝ ներս ընկած հատվածում, գետնից սոտ 100 սմ բարձրության վրա (նկ. 24):

ՍԱՐԳԻՍ ԲԱՐՁՐԱԲԱՇԵՑԻ

ԱԶԻԶ Ա



**Ծնթ.**: Գրությունն արված է խոշոր երկաթագրով, փոքրատառ է միայն շ-ն: Ինչպես երևում է գրչանկարից, որոշ տառեր կցագրված են: Հետաքրքիր և անսովոր ձև ունի Ձ տառը:

**Բարձրաքաշեցի** տեղանվանացույց մականունը հուշում է, որ Սարգիսը Լոռվա նշանավոր Բարձրաքաշ Սուրբ Աստվածածին կամ Սուրբ Գրիգոր վանքի<sup>36</sup> հետ առնչություն ունեցած մեկն է, թերևս վանքի հոգևոր սպասավորներից: Նշյալ վանքն ու նրա շրջակայքը հարուստ են արձանագրություններով<sup>37</sup>, որոնցից մի քանիսում թեև հիշատակված են Սարգիս անվամբ տարբեր անձինք, սակայն դրանցից որևէ մեկի հետ սույն Սարգսի նույնականացումը հնարավոր չէ լրացուցիչ տեղեկությունների բացակայության պատճառով:

34 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քալսեան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 2, էջ 844-845:  
35 Տե՛ս Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Եր., «Նաիրի» հրատ., 2015, էջ 89:  
36 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քալսեան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, էջ 630-631:  
37 Տե՛ս Սարգսյան Գ., «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1951, N 7-8, էջ 55-61, N 9-10, էջ 40-45, N 11-12, էջ 44-52: Վանքի մասին տես նաև Ոսկեան Խ. Հ., Գուգարքի վանքերը, Վիեննա, Մխիթարեան տպ., 1960, էջ 4-22, Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին Բարխուդարյան Ս. Գ., Ղաֆարյան Կ. Գ., Սաղոմյան Ս. Տ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 356-396:

Ուշագրավ է նաև արձանագրության անմիջապես ներքևում փորագրված գրությունը, որն իր տառատեսակով և գրության եղանակով կարծես թե տարբեր է վերևի գրությունից: Ըստ որում՝ երկրորդ տողի փորագրության սկզբնամասը փոքր-ինչ խնդրահարույց է. այնքան էլ պարզ չէ՝ արդյոք երևացող առաջին տառից առաջ եղե՞լ է(են) այլ տառ(եր), թե՞ ոչ: Նշելի է նաև, որ առաջին և երկրորդ տառերը կցագրված են: Հնարավոր մի քանի տարբերակների քննարկումից հետո<sup>38</sup> առավել հավանական համարեցինք այդտեղ **Ա-զիզ** անձնանվան ընթերցումը, իսկ դրան հաջորդող **Ա**-ն պարզապես անալարտ է մնացել կամ եղծվել է քարի վնասվածության հետևանքով:

**Ազիզ** անունն արձանագրված է «Հայոց անձնանունների բառարան»-ում թե՛ որպես իգական, թե՛ որպես արական անձնանուն. վերջինիս հնագույն վկայությունները ԺԲ դարից են<sup>39</sup>: Հնագրական տեսանկյունից թե՛ առաջին, թե՛ երկրորդ գրությունները թվագրում ենք ԺԵ դարով:

Այսպիսով՝ բերված երկու տասնյակից ավելի արձանագրությունները վկայում են, որ հայ ուխտավորները, տարբեր ժամանակներում այցելելով Սուրբ Հարության տաճար, հիշատակված լինելու ակնկալիքով ջանացել են իրենց անուններն արձանագրել նաև համալիրի հարավային մուտքը զարդարող սյուներին: Ըստ այսմ՝ նշյալ սյուներին, ի թիվս այլ լեզուներով թողնված արձանագրությունների, մեծ թիվ են կազմում նաև հայերեն գրությունները: Դրանց ընդհանուր թիվը գերազանցում է վաթսուներ:

**Մայրլ է. Սթոուն** – Երուսաղեմի Երրայական համալսարանի պրոֆեսոր, հայագետ: Երկար տարիներ զբաղվել է հայագիտական տարբեր հարցերի ուսումնասիրությամբ, մասնավորապես նրա ուշադրության կենտրոնում են եղել պարականոն գրականությունը, հայ-հրեական առնչությունները, հայկական հնագրությունը, ինչպես նաև վիմագրությունը: Այս թեմաներով հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ:

Էլեկտրոնային հասցե՝ michael.stone@mail.huji.ac.il

**Խաչիկ Ա. Հարությունյան** – Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, ձեռագրագետ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց ձեռագրական և վիմագրական ժառանգությունը՝ իր տարաբնույթ դրսևորումներով: Հետազոտությունները հիմնականում առնչվում են այդ գրավոր սկզբնաղբյուրներին, դրանց լեզվական, հնագրական, ոճական առանձնահատկություններին:

Էլեկտրոնային հասցե՝ khachik.har@gmail.com

38 Սույն գրության առիթով օգտակար քննարկում ենք ունեցել մեր գործընկեր վիմագրագետ Արսեն Հարությունյանի հետ:

39 Տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 59:

## THE ARMENIAN INSCRIPTIONS OF THE CHURCH OF HOLY SEPULCHRE IN JERUSALEM

Part 2. The Pillars of the Entrance to the Church and the Southern Wall

Michael E. Stone (Jerusalem)

*Member Israel Academy of Sciences and Humanities*

Khachik A. Harutyunyan

*Candidate of Sciences in Philology*

**Key words** - Jerusalem, Christianity, sanctuaries, monasteries, pilgrims, manuscript, inscription, graffiti, colophon.

The southern entrance of the Church of the Holy Sepulchre is decorated with 11 marble pillars, which were erected about nine centuries ago, and today they are presented to us almost unharmed. These pillars and the whole entrance are rightly considered to be one of the finest works of architecture of the Crusades period. We have designated the pillars by numbers 1-11 from left to right for easiness. On the outside, there is also one more pillar on the right side of the stairs ascending to Golgotha, which is the twelfth pillar.

On all the mentioned pillars there are inscriptions in different languages (Greek, Arabic, Assyrian, Georgian, Latin) inscribed by pilgrims and visitors, including also a great number of Armenian inscriptions, in which mainly the names of pilgrims are mentioned, and sometimes inscriptions consisting of one or two sentences are discerned.

It should be noted, that in the course of the time various signs, letters, sentences, one incised on the other, countless touches of pilgrims (even today the same phenomenon is noticed) make some inscriptions on the pillars extremely difficult to decipher at present, and some of them have been badly damaged and one or two letters are barely discerned, thus, giving an opportunity to decipher at least the language of the inscription.

There are also Armenian inscriptions on the outside wall (southern) of the church at full length of the stairs, ascending to Golgotha. All those inscriptions, as a rule, are scratched by some sharp instrument; they are not distinguished with proportionality and regularity, although in separate cases also a more serious approach and regularity can be noticed.

In total, we have found more than sixty inscriptions on the mentioned pillars and wall. In this article we present only 22 of them. In some cases, we have tried to date the inscriptions by their paleographical features or due to the identification of the mentioned persons.

Резюме

## АРМЯНСКИЕ НАДПИСИ ХРАМА ГРОБА ГОСПОДНЯ В ИЕРУСАЛИМЕ

Часть 2. Столпы входа в церковь и южная стена

Майкл Э. Стоун (Иерусалим)

*Член Израильской академии наук*

Хачик А. Арутюнян

*Кандидат фил. наук*

**Ключевые слова** - Иерусалим, христианство, святилища, монастыри, паломники, рукопись, надпись, граффити, колофон.

Южный вход в храм Гроба Господня украшают 11 мраморных столпов, которые были возведены около девяти веков назад и сегодня нам представляются почти невредимыми. Эти столпы и южный вход в целом, по праву считаются одними из лучших произведений архитектуры периода крестовых походов. Для простоты мы обозначили столпы номерами 1-11 слева направо. Снаружи есть еще один столп с правой стороны лестницы, ведущей на Голгофу, которую мы обозначили как двенадцатый столп.

На всех упомянутых столпах есть надписи на разных языках (греческом, арабском, ассирийском, грузинском, латинском), в том числе большое количество армянских надписей, сделанные паломниками и посетителями, в которых в основном упоминаются имена паломников, а иногда встречаются и надписи, состоящие из одного или двух предложений.

Следует отметить, что в течение времени различные знаки, буквы, предложения, выгравированные друг на друга, следы бесчисленных прикосновений паломников (то же явление наблюдается сегодня) затрудняют расшифровку надписей на столпах, а некоторые из них так сильно повреждены, что едва различимы буквы, что дает возможность распознавать хотя бы язык надписи.

Армянские надписи есть также на внешней (южной) стене церкви во всю длину лестницы, ведущей на Голгофу. Все эти надписи, как правило, нацарапаны каким-нибудь острым предметом; они не отличаются пропорциональностью и регулярностью, хотя в отдельных случаях можно заметить и более серьезный подход и закономерность.

Всего на указанных столпах и стене мы обнаружили более шестидесяти надписей. В этой статье мы представляем только 22 из них. В некоторых случаях мы пытались датировать надписи по их палеографическим особенностям или по идентификации упомянутых лиц.

## REFERENCES

1. **Acharean H.**, Hayots' andznanunneri bararan, hat. 1, Yer., YePH hrat., 1942 **(In Armenian)**.
2. **Acharean H.**, Hayots' andznanunneri bararan, hat. 2, Yer., YePH hrat., 1944 **(In Armenian)**.
3. **Aghawnuni M. yeps.**, Miabank' yew ayts'eluk' hay Yerusaghemi, Yerusaghem, tp. Srbots' Yakobeants', 1929 **(In Armenian)**.
4. **Aghawnuni M. yeps.**, Surb yerkrin srbavayreru awandut'iwinnerē, Yerusaghem, tp. Srbots' Yakobeants', 1936 **(In Armenian)**.
5. **Alishan H. Gh. V. M.**, Sisuan. hamagrut'iw n Haykakan Kilikioy yew Lewon Metsagorts, Venetik-S. Ghazar, 1885 **(In Armenian)**.
6. **Alpöyachean A.**, Patmut'iw n hay Kesarioy, teghagrakan, patmakan yew azgagrakan usumnasirut'iw n, hat. A., Gahirē, 1937 **(In Armenian)**.
7. **Barkhudaryan S. G., Ghafadaryan K. G., Saghumyan S. T.**, Divan hay vimagrut'yan, prak IX, Loṟu marz, Yer., HH GAA "Gitut'yun" hrat., 2012 **(In Armenian)**.
8. **Ch'ugaszyan B. L.**, Hayeren dzeragrger Amerikayi Miats'yal Nahangnerum, "Banber Matenadarani", Yer., 12 (1977), ēj 219-277 **(In Armenian)**.
9. **Hakobyan T'. Kh., Melik'-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bararan, hat. 1, A-D, Yer., YePH hrat., 1986 **(In Armenian)**.
10. **Hakobyan T'. Kh., Melik'-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bararan, hat. 2, D-K, Yer., YePH hrat., 1988 **(In Armenian)**.
11. **Hakobyan T'. Kh., Melik'-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bararan, hat. 3, K-Ch', Yer., YePH hrat., 1991 **(In Armenian)**.
12. **Khach'ikyan L. S.**, ZhYe dari hayeren dzeragrgeri hishatakaranner, masn yerrord (1481-1500 t't'), Yer., HSSH GA hrat., 1967 **(In Armenian)**.
13. **Khach'ikyan L., Mat'evosyan A., Ghazarosyan A.**, Hayeren dzeragrgeri hishatakaranner, ZhD dar, masn 1 (1301-1325 t't'), Yer., "Nairi" hrat., 2018 **(In Armenian)**.
14. **Minasyan T'.**, Arts'akhi grch'ut'yan kentronnerē, Yer., "Nairi" hrat., 2015 **(In Armenian)**.
15. **Örmanean M. ark'.**, Azgapatum, hat. 2, masn 1, Pēyurut', tp. "Sewan", 1960 **(In Armenian)**.
16. **Palean T. yeps.**, Arajnordakan yajordut'yunk' Kesarioy S. Karapeti vanuts', "Biwzandion", K. Polis, 1906, t'iw 3073 **(In Armenian)**.
17. **Pogharean N. yeps.**, Mayr ts'uts'ak dzeragrgrats' Srbots' Yakobeants', hat. 2, Yerusaghem, tp. Srbots' Yakobeants', 1967 **(In Armenian)**.
18. **Pogharean N. yeps.**, Mayr ts'uts'ak dzeragrgrats' Srbots' Yakobeants', hat. 6, Yerusaghem, tp. Srbots' Yakobeants', 1972 **(In Armenian)**.
19. **Sargsyan G.**, "Bardzrak'ash" vank'ē yev nra vimagrut'yunē, "Ējmiatsin", 1951, N 7-8, ēj 55-61, N 9-10, ēj 40-45, N 11-12, ēj 44-52 **(In Armenian)**.
20. **Sawalaneants' T. H. T'.**, Patmut'iw n Yerusaghemi, grabar bnagrēn ashkharhabari veratsets' Nshanean M. yeps., hat. 1-2, Yerusaghem, tp. Srbots' Yakobeants', 1931 **(In Armenian)**.
21. **Sruandzteants' G. v.**, T'oros aghbar, masn B., K. Polis, tp. G. Paghatlean (Aramean), 1885 **(In Armenian)**.

22. **St'oun M. Ye., Harut'yunyan Kh. A.**, Yerusaghemi Surb Harut'yan tachari hayeren ardzanagrut'yunnerē. mas arajin: Surb Hovhannes avetaranich' yekeghets'in yev nra ardzanagrut'yunnerē, "Vēm", Yer., 2020, N 2, ěj 159-177 (**In Armenian**).
23. **Tēr-Yovhannēseants' A. yeps.**, Zhamanakagrakan patmut'iwn Surb Yerusaghēmi, hat. 1, Yerusaghēm, tp. Srbots' Yakobeants', 1890 (**In Armenian**).
24. **Tsovakan (Pogharean) N. ark'.**, Hay grich'ner (T'-ZhĒ dar), Yerusaghēm, tp. Srbots' Yakobeants', 1992 (**In Armenian**).
25. **Tsovakan (Pogharean) N. ark'.**, Step'anos Yerkeyn (1295-1327), "Sion", 1967, N 5-6, ěj 247-249 (**In Armenian**).
26. **Voskean h. H.**, Gugark'i vank'erē, Vienna, Mkhit'arean tp., 1960 (**In Armenian**).





Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4




Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7




Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12




Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18



Նկ. 19




Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



Նկ. 24

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԷՆ ԽԱՄԱՆԻԱԿԱԿԱՆ ԽԱՆՈՂԵԱ, ԺԲ (ԺԸ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 3 (71), ԽՈՒ